

Թիւ 26681  
Փետրուար 1, 1980

Հոգեշնորհ  
Տ. Վազգէն Ծ. Վրդ. Լէշիշեան  
Առաջնորդի Շոխանորդ Գանատայի  
Թորոնթօ.

Սիրելի Հայր Վազգէն,

Նկատի առինք Թորոնթոյի Ս. Խաչ Եկեղեցւոյ Ժխական  
Խորհուրդի 1979 Դեկտեմբեր 27 թուակիր նամակը, զոր  
մեզի յանձնեցիք 1980 Յունուար 17ին Մոնթրէալի մէջ:

Թորոնթոյի Ս. Խաչ Եկեղեցւոյ Ժխական Խորհուրդին  
խնդրանքին կարելի է ընդառաջել հետեւեալ կարգադրու-  
թիւնը քննելով:

1. Լանի որ Տ. Յուսիկ Տհնյ. Նշանեան Գանատայի  
մէջ կը ընակի, կրնար զայն նշանակել հովիւ Ս. Խաչ  
Եկեղեցւոյ համայնքին, կատարելու համար կրօնական  
բոլոր պարտականութիւնները ձեր հսկողութեան ներքեւ  
եւ ենթակայ Առաջնորդի իշխանութեան:

2. Ժխական Խորհուրդին, ձեր եւ Տ. Յուսիկ Լահա-  
նայի համաձայնութեամբ ժխական Խորհուրդը Տ. Յուսիկ  
Լահանային կը վճարէ ամսական վեց հարիւր զանատական  
տուար, առաւել ամսական երկու հարիւր տուար իբրեւ  
տան վարձք, որ ենթակայ պիտի ըլլայ փոփոխութեան՝ ըստ  
կենցաղային պահանջից:

Յ. Առաջին երկու ամսուան վճարումները կանխաւ ծը-  
խական Խորհուրդը պէտք է փոխանցէ ձեզի եւ դուք Առաջ-  
նորդի Շոխանորդի ձեր հանգամանքով դրամատան մէջ հաշիւ  
մը կը բանար՝ Տ. Յուսիկ Լահանայի ամսական վճարումնե-  
րը կատարելու համար: Ամէն ամսու առաջին շաբաթուան

ընթացքին ծխական Խորհուրդը պարտի նշանակուած գումարները Առաջնորդի Փոխանորդին փոխանցել:

4. Տ. Յուսիկ Բահանային պէտք է տրուի նաեւ տարեկան երկու շաբաթ վճարովի արձակուրդ, երկու Կիրակի բացակայելու իրաւունքով:

Ուրախ պիտի ըլլանք եթէ վերոյիշեալ կարգադրութիւնը կատարէք Ս. Խաչ Եկեղեցւոյ ծխական Խորհուրդին եւ Տ. Յուսիկ Բհնյ. նշանեանի հետ: Ճամբցէք մեզի ներկայացնել ձեր վերջնական գրաւոր համաձայնութիւնը՝ որպէս զի պաշտօնապէս զայն հաստատենք:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ